ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՓՅՈՒՌՔԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՐ

MINISTRY OF DIASPORA OF THE
REPUBLIC OF ARMENIA

MINISTER

«29» 03 2012 թ.
12.2/570-12

Սիրելի հայրենակիցներ,

Խոր վիշտ և ափսոսանք ապրեցինք, երբ տեղեկացանք Մարսելի հայկական հետազոտությունների և արխիվացման կենտրոնի նախագահ Կարբիս Արթինի վախճանի մասին:

Անգնահատելի էր Կարբիս Արթինի դերը Ֆրանսիայի հայ համայնքում և հայ իրականության մեջ: Նա մեծ հետք թողեց հայկական Սփյուռքի և Ֆրանսիաի հասարակական և քաղաքական կյանքում: Բազում տարիներ ղեկավարելով Մարսելի հայկական հետազոտությունների և արխիվացման կենտրոնը՝ անմնացորդ նվիրվեց և ծառայեց հայ ժողովրդի վեհ նպատակների իրագործմանը, ֆրանսահայ համայնքի բարգավաճմանը և հզորացմանը, կարևոր խնդիրների հաղթահարմանը:

Կարբիս Արթինի կատարած ազգանվեր գործն ու անմնացորդ նվիրվածությունը միշտ վառ կմնա ֆրանսահայ համայնքի պատմության էջերում և հայկական Սփյուռքի կյանքում:

Այս օրերը հիրավի սգո օրեր են բոլորիս համար, և մենք Ձեզ հետ միասին ապրում ենք այս անդառնալի կորստի ցավն ու հարգում Կարբիս Արթինի վառ ու պայծառ հիշատակը:

Մխիթարվենք այն գիտակցությամբ, որ եթե այսօր մեզ հետ չէ սիրելի Կարբիսը, ապա նրա հայաշունչ և հայրենանվեր գործը, թողած հետքը դեռ երկար ու երկար կունենա հայապահպան հետևանքներ:

Ցավով՝

ՀՐԱՆՈՒՇ ՀԱԿՈԲՅԱՆ